



# ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## ազգային-ազասական կուսակցության ԵՋԱԲԵՐԱԿԱՆ

### Մ Ե Ր Թ Ե Կ Ն Ա Ծ ՈՒ Ն Ե Ր Ը

<b>№ 6</b>	<b>ՎԱՆԱԶՈՐԻ քաղաքապետի թեկնածու Գառնիկ Բենիկի Սահակյան</b>	
------------	--	--

**Սիրելի վանաձորացիներ, հոկտեմբերի 17-ին, ժ. 21.30-22.00 միջակայքում «Լոռի-TV» հեռուստատեսությամբ դիտեք Վանաձորի քաղաքապետի թեկնածու Գառնիկ Սահակյանի ուղերձը վանաձորցիներին**

**«Ժառանգություն» կուսակցության 5-րդ համագումարը**

էջ 2

**«Ժառանգություն» կուսակցության վարչության նորընտիր նախագահ Սևակիտ Բախշյանի անդրանիկ ասուլիսը**

էջ 3

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՄԱԿ-ՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

էջ 3

**ԽՈՐՀՐԳՎԱՐՄԱՆԱԿՍ**

էջ 4-5

**ԲԱՅՅԻ ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԻՏՎ-ՈՒՄ**

էջ 6

**Մ Ի Զ Ա Չ Գ Ա Յ Ի Ն**

էջ 7

**«Ժառանգությունը» անխոչընդոտելի է համարում սեւանա լճից հավելյալ ջրառը**

էջ 8

**«Ժառանգության» հեղինակած նախագծերը եւ օրինագծերը**

էջ 8

### ԱԶԱՏ ԲԱՂԱՔ՝ ԱԶԱՏ ԵՐԿԻՐ

Գառնիկ Սահակյանը Հայաստանի հպարտ քաղաքացի է, Վանաձորի իրական ողորհ՝ մարդ, ով նվիրված է մեր երկրի ազատությանը, ժողովրդավարությանը եւ հզորությանը, ով սիրում է իր քաղաքը, ով գիտի, որ Վանաձորի ազատ, բարձր, հպարտ ապագան կապված է Ձեր ընտրության, աստվածատուր Ձեր իրավունքի հետ:

Գառնիկը «Ժառանգություն» կուսակցության թեկնածուն է, Գառնիկը այլընտրանքային թեկնածուն է մեր ողջ ժողովրդի: Մենք մաղթում ենք ամենայն բարիք իր բոլոր մրցակիցներին. հարգարժան մարդիկ են բոլորն էլ: Բայց ժամն է ահա այսօր, որ Վանաձորի ժողովուրդը որոշի տեղ կանգնել իր ծայրին, իր իրավունքին եւ ճանապարհի բացել նոր այլընտրանքի, նոր շնչի եւ նոր դեկավարության: Դեկավարություն եւ նոր քաղաքապետ, ով հաշվետու է լինելու ժողովրդի առջեւ, ով խորհրդակցելու է իր ընտրողների հետ, ով լինելու է բաց՝ առաջարկների, խորհուրդների, անգամ քննադատությունների համդեպ:

Գառնիկը համձնառու է «Ժառանգու-

յան» հետ մեկտեղ, որ Վանաձորը դառնա մեր հանրապետության առաջատար քաղաքը՝ իր ազատ իրավունքներով եւ այն պարզ ճշմարտությամբ, որ Վանաձորը ուժեղ է իր քաղաքացիներով՝ ուսուցիչներով, բժիշկներով, բանվորներով, մտավորականներով եւ, առաջին հերթին, իր ապագա սերնդով:

Այսօրվա ընտրությունը, քանակազին վանաձորցիներ, դա մերօրյա երիտասարդության պայծառ ապագայի երաշխավորման ընտրություն է: Ձեր ձեռքերում է: Տեղ կանգնեք Ձեր ծայրին, տեղ կանգնեք Վանաձորի ապագային, Հայաստանի Հանրապետության հզորությանը եւ ազատությանը: Գառնիկ Սահակյանը կդառնա այն շիտակ, պարզ, սրտացավ եւ հաշվետու քաղաքապետ, ով ոչ թե կառավարելու է Ձեզ, այլ ծառայելու է որպես ազատ Վանաձորի, ազատ Հայաստանի նոր քաղաքապետ:

Բարի ընտրություն: Տեղ եղեք:

**Րաֆֆի ԳՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ**



**ԱՆՆԱՅՈՐԳ ԵՎԻՐՈՒՄՈՎ ՍՈՍՅԵՆՈՒ ԵՄ ԻՄ ՎԱՆԱԶՈՐԻՆ Գ.Սահակյան**

#### ՎԵՆԱՍՎՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1957թ. Նոյեմբերյանի շրջանի Ոսկեան գյուղում:  
1988թ.-ին ավարտել է Երեւանի բժշկական ինստիտուտի դեղագործական ֆակուլտետը:  
1988-90թթ. աշխատել է Արցախում՝ որպես բժիշկ-դեղագետ:  
1990-92թթ. աշխատել է Վանաձորի պե-

տական դեղատնային ցանցում:  
1993թ.-ից «Ազնի» ՍՊԸ-ի միանձնյա հիմնադիր տնօրենն է եւ ընկերության հիմնադրման օրվանից 100%-ով աշխատում է հարկային դաշտում:  
1993թ.-ից զբաղվում է դեղերի եւ բժշկական օգտագործման ապրանքների մանրամասն թիվներով:  
Միջին բիզնեսի հարկատու է:  
Ամուսնացած է, ունի չորս զավակ:

Ազնիվ եւ հոգատար է Վանաձորի «Ազնի» դեղատան բոլոր հաճախորդների հետ փոխհարաբերություններում:  
«Ժառանգություն» կուսակցության անդամ է 2005թ. մայիսից, իսկ 2005թ. հոկտեմբերից Վանաձորի տարածքային կառույցի ղեկավարն է: «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ է 2006թ.-ից:  
Մինչ այդ որևէ կուսակցության չի անդամակցել:



<b>№ 1</b>	<b>ԱՆՏԱՐԱԿ քաղաքի ավագանու թեկնածու Սարգիս Աղոլմյան</b>	
------------	---	--

**ՎԵՆԱՍՎՐՈՒԹՅՈՒՆ**

Ծնվել է 1975թ. Աշտարակ քաղաքում:  
1991-1995թթ. ընդունվել է ավարտել է Երեւանի Տնտեսա-իրավագիտական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժինը:  
1992-1994թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:  
1996թ. աշխատել է «Աղոլմյաններ» ընտանեկան ձեռնարկությունում որպես տնօրեն:  
1999 թվականից մինչեւ օրս Ա/Չ Ա.Աղոլմյան ձեռնարկություն տնօրենն է:  
2002 թվականից ՀՀ վաճառականների միության անդամ է:  
2008 թվականից «Ժառանգություն» կուսակցության անդամ է:  
Ամուսնացած է, ունի երկու երեխա:

**ԱՌԱՋԻՎԱ ԶՈՐԱ ՏԱՐՎԱ ԾՐԱԳԻՐ**

**ԱԶԱԿՑԵԼ**

- Դպրոցներից, մանկապարտեզներից միայնակ ծերերին
- պատերազմում զոհվածների ընտանիքներից
- հաշմանդամներին:

**ՍՏԵՂԾԵԼ**

- ծերերի եւ երիտասարդների համար ժամանակ վայրեր
- երեխաների եւ պատանիների համար սպորտային եւ մշակութային տարրեր խմբակներ:

# «Ժառանգություն» կուսակցության 5-րդ համագումար. ճշտորոշվեցին առաջիկայի ուղենիշները, վարչության նախագահ ընտրվեց Անահիտ Բախչյանը

Հոկտիսի 11-ին ՀՀ կառավարության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Ժառանգություն» կուսակցության 5-րդ համագումարը, որին ներկա էին կուսակցության 300 պատկերասեր 274-ը, ինչպես նաև համակիրներ, հյուրեր, մշակույթի ու գիտության նշանավոր գործիչներ, գանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:



«Կարևորը, սակայն, այսօր են այստեղ մեր ապագան է, սերունդներին մեր կտակելիք Չայաստանն է, որը հրամայաբար պետք է հիմնված լինի ծճարտության ձգտման վրա: Դա ինքնին պահանջում է քաղաքական արիություն, քաղաքացիական կարողություն և հասարակական պատասխանատվություն: Ըստ

ները դուրս չեն բերվել ապիկարության թմբիրից, պահպանվում են խաղի ուժային կանոնները, հանցագործները մնում են անպատիժ, և պետական մակարդակով իրավաբաղադրական գնահատական չի տրվում պաշտոնական մարմինների ու պետական ծառայողների՝ հաճախ հանցավոր ու քրեորեն հետապնդելի ոտնձգություններին»:

Նույն օրը տեղի ունեցավ կուսակցության նոր ընտիր վարչության անդամիկ նիստը, որտեղ քվեարկությանը վարչության նոր նախագահ ընտրվեց Անահիտ Բախչյանը, փոխնախագահ՝ Մովսես Արիստակեսյանը, քարտուղարներ՝ Վարդան Խաչատրյանը և Արմեն Մարտիրոսյանը, մամուլի խոսնակ նշանակվեց Հովսեփ Խուրշուդյանը և «Ժառանգության» կենտրոնական գրասենյակի տնօրեն՝ Գեորգ Կալենյանը:

11 հոկտիսի 2008թ.

## Անահիտ Ներսեսի ԲԱՆԸՅԱՆ-ԺԱՄԿՈՉՅԱՆ

Ծնվել է 1947թ. Երեւանում, հայրենադարձ արհեստավոր Ներսես Հովսեփի ժամկյանի և տանտիրուհի Էլիզա Մկրտչի Աթոռամյանի ընտանիքում: 1965թ. ավարտել է Երեւանի թիվ 127 տասնմեկամյա դպրոցը՝ արժանի մեդալով: Այս ընդունվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը և ավարտել է այն 1970թ.:



1970 թվականին ամուսնացել է իր համակուրսեցի Յուրի Բախչյանի հետ և մեկնել Սախալին, որտեղ Յուրան ծառայել է խորհրդային բանակում:

1972 թվականից աշխատում է մանկավարժության բնագավառում. 1972-1981թթ. Երեւանի թիվ 103 միջնակարգ դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցիչ, 1981-1989թթ. Շահումյանի շրջանի ժողովրդագրության ուղղությամբ դոկտոր, 1989-1998թթ. Երեւանի Սիամանթոյի անվան դպրոցի փոխտնօրեն:

1999-2007թթ. աշխատել է Երեւանի Դ.Դեմիրճյանի անվան թիվ 27 դպրոցի տնօրեն:

Բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

2003թ. ընտրվել է «Մուշ» համատիրության նախագահ հասարակական հիմունքներով:

2007թ.-ից Աժ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր է:

Ունի երեք դուստր՝ Լուսինե, Լիլիթ, Գայանե:

Համագումարը լսեց, ամփոփեց և քաղաքական գնահատական տվեց 2006-ից մինչ օրս «Ժառանգություն» կուսակցության, ինչպես նաև համաժողովի խորհրդարանական խմբակցության կատարած աշխատանքներին: Խորհրդին վերլուծության ենթարկվեցին վերջին երկու տարիներին ՀՀ ներքին և արտաքին քաղաքական գործառույթները, մասնաճյուղերի արտաքին քաղաքական դաշտում հանրապետությանը մեկուսացման տանող գործընթացների և պետականությունը հյուսիս ներքին խնդրումների կապակցությամբ, ուրվագծեց առաջիկայի համար կուսակցական-քաղաքական գործունեության ուղենիշները ու ռազմավարական գերակայությունները:

Համագումարը բացեց և հյուրերին ողջունեց «Ժառանգության» վարչության և Ազգային ժողովի համաժողովի խմբակցության անդամ Վարդան Խաչատրյանը: Մասնակիցներին ողջունելի խոսք հղեցին նաև համագումարի հյուրերը՝ Մտավորականների ֆորումի անդամ, Հայաստանի ժողովրդական արտիստ Երվանդ Մանուկյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Շուշիի հատուկ գումարտակի նախկին հրամանատար, արցախյան ազատամարտի մեծ նվիրյալ ժիրայր Աֆիլյանը, Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ Ստեփան Դեմիրճյանը, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ուրիշներ:

Այնուհետև ելույթ ունեցավ «Ժառանգություն» կուսակցության նախագահ և համաժողովի խորհրդարանական խմբակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը: Ծրագրային իր խոսքում Հովհաննիսյանը պատմական անդրադարձ կատարեց դեպի մեր համազգային ժառանգության ակունքները՝ շեշտելով հայրենի հիմնավոր քաղաքակրթությունը, հարուստ մշակույթը ազգի բարոյական և սպաս դնելու, անցյալում թույլ տված ցավալի սխալներից դասեր քանելու հրամայականը:

Վերջում միաձայն ընդունվեց «Ժառանգություն» կուսակցության 5-րդ համագումարի բանաձևը: Նրանում մասնավորապես արձանագրված է. «Քաղաքական-ժողովրդավարական խորհրդային բարեփոխումներից խուսափելը կամ դրանց անտեսելը հավասարազոր են դառնում ապագայում մարտնչական ողբերգության կրկնման վտանգ ստեղծելու, քանի դեռ Հայաստանի ժողովրդավարական հաստատությունը»:

Հովսեփ Խուրշուդյանը ներկայացրեց կանոնադրական հանձնաժողովի հաշվետվությունը, որը հաստատելուց հետո համագումարը լսեց և ընդունեց կուսակցության Կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները, ապա հաստատեց կանոնադրական հանձնաժողովի նոր կազմը:

### Լ ՈՒՐ ԵՐ



## Արմեն Մարտիրոսյանը՝ «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար

Սեպտեմբերի 8-ին Ռաֆֆի Հովհաննիսյանի առաջարկությամբ «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցությունը պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին միաձայն ընտրեց խմբակցության նախագահ: «Արմենը խոստումնալից երիտասարդ լիդեր է, և ես վստահ եմ, որ այդ նոր կարգավիճակում ավելի օգտակար կլինի «Ժառանգությանը» ու նրա առաքելությանը», - ասել է Հովհաննիսյանը:

4 սեպտեմբերի 2008թ.

## «Ժառանգություն» խմբակցությունում տեղի ունեցավ ատուկա եվրամիության անդամ երկրների 15 լրագրողների համար

«Ժառանգություն» խմբակցությունում Աժ պատգամավորներ Ստյոպա Սաֆարյանը և Լարիսա Ավաբեկյանը պատասխանեցին եվրամիության անդամ երկրների

15 առաջատար լրատվամիջոցների լրագրողներ Վադյոտաս Բենիուկսիսի, Ռոբերտա Բերտոլդիի, Ադրիանա Բորովիչի, Աննելինե Դե Գրեֆի, Սիլվիանա Դիմիտրովայի, Էլիզաբեթ Ֆրիմուլի, Մարիա-Ալբա Գիլբերտ Գրատի, Բարբարա Գրուբերի, Ստեֆան Հյուդեբի, Էսա Ջարվելայնեհի, Ինեսե Կառլինյայի, Սիլվիանա Լաչինսկիի, Յելենա Միլինկովիչի, Անդրեսա Օբրինկի, Լյուբոշ Պալատայի հարցերին: Վերջիններս սեպտեմբերի 2-6-ը Հայաստանում են գտնվում եվրոպական լրագրության կենտրոնի և Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ «Եվրոպական հարեւանության քաղաքականություն. առեւտրային հոսքեր և միջազգային անվտանգություն» ծրագրի շրջանակներում: Ֆինլանդիայից, Շվեդիայից, Բելգիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Լատվիայից, Լիտվայից, Ռումինիայից, Բուլղարիայից, Սլովենիայից, Գերմանիայից, Չեխիայից ժամանած լրագրողների հետաքրքրում էին «Ժառանգություն» կուսակցության դիրքորոշումները եվրոպական ինտեգրման, ժողովրդավարության, տարածաշրջանային վերջին զարգացումների, Հայաստանի ներքաղաքական իրավիճակի, մարդու իրավունքների պաշտպանության, խառնի և լրատվամիջոցների ազատության և այլ հարցերի վերաբերյալ:

Սեկունկես ժամ տեսած ատուկայի ընթացքում Ստյոպա Սաֆարյանը և Լարիսա Ավաբեկյանը հանգամանորեն ներկայացրին նաև կուսակցության գնահատականներն ու մտնողները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղված վերջին նախաձեռնությունների, դարաբաղյան խնդրի կարգավորման գործընթացի, Հայաստան-ՆԱՏՕ, Հայաստան-Եվրամիություն, Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների, Կոսովոյի, Աբխազիայի և Չաբալայի անկախության հարցերի միակողմանի ճանաչման առնչությամբ:

11 օգոստոսի 2008թ.

### «Ժառանգություն» կուսակցության վարչության նորընտիր նախագահի անդրանիկ ատուկիսը

«Ժառանգություն» կուսակցության կենտրոնական գրասենյակում տեղի է ունեցել կուսակցության վարչության նորընտիր նախագահ Անահիտ Բախչյանի անդրանիկ ատուկիսը, որին մասնակցել են նաև Ազգային ժողովի «Ժառանգություն» խմբակցության քարտուղար Ստյոպա Մախարյանը եւ կուսակցության մասնախումբի ղեկավարները:

Անահիտ Բախչյանը նախ ներկայացրել է այդ պատասխանատու պաշտոնում ընտրվելուց հետո իր եւ կուսակցության անելիքները, ապա՝ հրապարակել «Ժառանգություն» կուսակցության վարչության 2008թ. հուլիսի 24-ի նիստի որոշումները երեք հարցերի վերաբերյալ.

- 1. Կուսակցության վարչությունը որոշել է 2008թ. մարտի 1-2-ին երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ու դրանց պատճառների ուսումնասիրության Աժ ժամանակավոր հանձնաժողովում

- խմբակցության մասնակցության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու նպատակով այդ հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանին պարզաբանման ենթակա խնդիրների վերաբերյալ գրավոր հարցադրումներ ուղղել՝ ի պատասխան նրա 2008թ. հունիսի 19-ի գրության:
- 2. Կուսակցության վարչությունը որոշում է կայացրել 2008թ. սեպտեմբերին Երեւանի Արաբկիր համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում համայնքի ղեկավարի պաշտոնում կուսակցության վարչության անդամ Ջոյա Թադեւսյանի թեկնածությունը առաջադրելու եւ պաշտպանելու մասին:
- 3. Կուսակցության վարչությունը ընտրել է Չայ ազգային կոնգրեսին «Ժառանգության» անդամակցելու հրավերը եւ որոշում է կայացրել «ՉԱԿ-ի ծրագրային եւ աշխատակարգային փաստաթղթերի ընդունումից հետո ընտրվել նրա հետ համագործակցության եւ գործընկերության բոլոր հնարավոր ձևերը»:

25 հուլիսի 2008թ.

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «Չայ Ազգային Կոնգրեսի» ստեղծումը ողջունելու մասին

- «Ժառանգություն» կուսակցությունը՝
- վերահաստատելով պետության ու հասարակության առջեւ ծառայած հիմնախնդիրների ու մարտահրավերների հաղթահարման գործում ընդդիմադիր քաղաքական դաշտի համախմբված գործակալության իր նվիրումը,
- կարծելով տարիների ընթացքում բոլոր առողջ քաղաքական ուժերի բյուրեղացած անհատական եւ հավաքական ինքնությունը,
- վերաբերելով քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների ու ժողովրդավարության համար ընդդիմադիր ուժերի կազմում իր ծավալած համատեղ պայքարը՝

- ա) արժանվույն է գնահատում Համաժողովրդական շարժման անցած ուղին եւ դերակատարումը Հայաստանում քաղաքացիական գիտակցության արթնացման, համակարգափոխության աշխատանքի առաջարկելու եւ այդ ուղղությամբ հասարակության առաջընդդեմ գործում.
- բ) ողջունում է այդ շարժման հանրակարգային հանգրվանը հանդիսացող Չայ Ազգային Կոնգրեսի հռչակումն

- իրեն բազմակարծ եւ տարբեր գաղափարախոսություններ դավանող քաղաքական ուժերի միասնականության լավագույն խորհրդանիշ.
- գ) կարենում է Հանրապետության առջեւ ծառայած հիմնախնդիրների լուծմանն ուղղված ընդդիմադիր ուժերի գործողությունների համակարգավածությունը, փոխկապակցում է դրանց վերաբերյալ փոխադարձ տեղեկացվածությունը.
- դ) հայտարարում է ՉԱԿ-ի հռչակած նպատակների ձեռքբերման գործում իր գործընկերային մասնակցության պատրաստակամությունը՝ «Ժառանգություն» կուսակցության որդեգրած սկզբունքների եւ նպատակների շրջանակներում.
- ե) իր պատրաստակամությունն է հայտնում՝ ՉԱԿ-ի ծրագրային եւ աշխատակարգային փաստաթղթերի ընդունումից առաջ եւ/կամ հետո ընտրվել նրա հետ մասնակցության, համագործակցության եւ/կամ գործընկերության բոլոր հնարավոր ձևերը:

11 օգոստոսի 2008թ

### Աժ «Ժառանգություն» խմբակցության հայտարարությունը

Վրդվումը տեղեկացրեց, որ 2008թ. օգոստոսի 6-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում բռնություն է կիրառվել «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Գոհար Վեզիրյանի հանդեպ, ով այդ պահին իր աշխատանքային պարտականություններն էր կատարում՝ լուսաբանելով «Հանրապետություն» կուսակցության քաղաքացիական անդամ Սմբատ Սյվազյանի դատարարությունը: Դատավոր Գագիկ Ավետիսյանի հրահանգով դատական կարգադրիչները ընդհուպ մարմնական վնասվածքներ են հասցրել լրագրողին եւ քաշքշելով ու հարվածելով տեղափոխել անբաստանյալների պահման սենյակ՝ քրեական հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող մի քանի տղամարդկանց հետ նրան պահելով մոտ մեկուկես ժամ: Այդ դատարարական ակտիվիզմը նախորդ նիստին՝ օգոստոսի 5-ին խոչընդոտվել էր «Առավոտ» եւ «Չորրորդ իշխանություն» թերթերի ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի մասնագրասկան աշխատանքը, ով կրկին բռնությանը դուրս էր բերվել նիստերի

դահլիճից եւ անազատության մեջ դրվել նույնատիպ խցում: Այս ամենի մոտ արդեն «ստվերվում» են «Ազատություն» ռադիոկայանի թրթակից Հովհաննես Շողիկյանի վրա միտուր նախագահող Գագիկ Ավետիսյանի գողգողոցը եւ օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ առանց համապատասխան որոշումներ ընդունելու եւ հրապարակելու դատավորի կողմից դատական նիստի ժամանակ տեսագրումները, լուսանկարահանումները եւ ձայնագրումներն արգելելը՝ իբր «հանուն ժողովրդավարության, հասարակական կարգի պահպանության, պետական անվտանգության, դատարանում հանդես եկող կողմերի մասնավոր կասեցի պաշտպանության եւ արդարադատության նշանների պաշտպանության»:

Ավետիս «Ժառանգություն» խմբակցությունը դեռեւս հուլիսի 30-ին դատապարտել էր նաեւ այս մի դատավարության ընթացքում պարբերաբար տեղ գտնող ապօրինությունները, որոնք մասին զանգվածային լրատվամիջոցները շարունակում են ահագնվել անգամ օգոստոս-

սի 7-ի դրությամբ եւ որոնք այդպես էլ չեն կանխվում դատական իշխանության վերադառ մարմինների կողմից, փաստում ենք, որ լրագրողների նկատմամբ կիրառվող բռնությունների ու լրագրողական աշխատանքի խոչընդոտման պատճառը դատավորների, իրավապահ մարմինների եւ դատարանների անպատժելիությունն է, ովքեր հաշվեհարկարի «օրինականացված» միջոցներ են կիրառում իրենց հակաօրինական գործողությունների վրա հանրության ուշադրությունը հրավիրող լրագրողների նկատմամբ: Ավելին՝ փորձ է արվում արդեն «հերթական գործը թխել» անհնազանդ այդ լրագրողների նկատմամբ:

«Ժառանգություն» խմբակցությունը հանրապետության բարձրագույն ղեկավարությունից պահանջում է միաբերվել իրավական-քաղաքական գնահատական տալ կատարվածին, վերջ տալ լրագրողների հետապնդման այս «ստրկու» ձեւին, համապատասխան ընթացք դնել պարտական մարմիններին «Ժառանգություն» խմբակցության անդամ Ջարուհի Փոստանյանի դիմում-բողոքին եւ ապահովել լրագրողների տեղեկատվություն տարածելու, իսկ ՀՀ քաղաքացիների՝ խոսքի ու տեղեկատվություն ստանալու իրավունքը:

### «Ժառանգության» մասնակցությունը Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի» նախագծի քննարկմանը

Սեպտեմբերի 5-ի «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր եւ կուսակցության վարչության նախագահ Անահիտ Բախչյանը մասնակցեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հրավիրած «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի» նախագծի քննարկմանը: Անահիտ Բախչյանը ողջունել է հայեցակարգի հասարակական քննարկումը մինչեւ Սփյուռքի նախարարության ձեւավորումը: Խոստանալով խմբակցության կողմից առաջիկայում ներկայացնել գրավոր առաջարկներ՝ պատգամավոր Բախչյանը քննարկման ընթացքում մասնավորապես Սփյուռքի սահմաններ վերաբերող հայեցակարգի 6-րդ կետում առաջարկել է այդպիսին համարել ոչ թե ՀՀ եւ ԼՂ տարածքից դուրս բնակվող, այլ Հայկական բարձրավանդակից դուրս բնակվող հայկական համայնքները: Նա նաեւ մտահոգություն է հայտնել, որ հայրենադարձության համար Հայաստանում առկա է անապաստ իրավական եւ գործնական դաշտ գործարարության, քաղաքացիություն ստանալու, երկրում կոռուպցիայի հարթահարման եւ այլ առումներով: Նա հոյս է հայտնել, որ Սփյուռքի նախարարությունը՝ իր հայեցակարգային սկզբունքներից էլնելով, իր հերթին զուգաշախիկներ կհազգնի պատկան մարմիններին, որպեսզի նրանց գործեն օրինականության դաշտում:

5 սեպտեմբերի 2008թ.

### «Ժառանգությունը» դատապարտում է



«Ժառանգություն» կուսակցությունը եւ համաձայն խմբակցությունը խստորեն դատապարտում են «Ազատություն» ռադիոկայանի երեւանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Չայա Մելքունյանի նկատմամբ օգոստոսի 18-ի երեկոյան Երեւանի կենտրոնում իրականացված բռնարարը: Իրավունքների ու ժողովրդավարական ցանկացած երկրում իրականացված սահմանները կրթաքաղաքացիական ունեցողությունը իրականացնողներին միջազգային կապակցությունում: Եթե իշխող ղեկավարները լրագրողների հանդեպ այսչափ մեծաքանակ բռնություններից հետո կվերանայեին իրենց պաշտոնակարգում շարունակելու հարցը, կամ երկրի բարձրագույն ղեկավարությունը նման հետևություն կանգնեցնե: Ավար, իշխանությունները սովորական դարձած անգործությամբ իրենց դուրս են դրել հանրային հաշվետվողականության, օրինականության շրջանակներից եւ շարունակում են «դիտորդական առաքելություն» իրականացնել այն երկրում, որտեղ իրենց հռչակել են ժողովրդի լատախոթությունը ստացածներ եւ նրա կամքը իրականացնողներ: Իսկ ազատ խոսքի, լրագրողների նկատմամբ բռնություններն արդեն դարձել են պարբերական եւ «սովորական» երևույթ:

Չայա Մելքունյանի նկատմամբ տեղի ունեցածը լավագույնս է բնութագրում ցինիզմի ու անպատժելիության մեծ չափաբանակ ստացած մեր պետությանը. Երեւանի

կենտրոնում՝ մարդաշատ վայրում, վարձկանը «ընթերցում է իրականացում» է իր եւ պատվիրատու-տերերի դատավճիռը բազմակարծության, տարբերվող տեսակետի նկատմամբ, անպատժելիության նրա համոզվածությունն այնքան հիմնավոր է, որ նա դրանից հետո շարունակում է անխռով նստած մնալ դեպքի վայրում, որից առաջվելուպես համոզվելի է գալիս իր ակնոցները կտրելու նպատակով այնտեղ վերադարձած լրագրողը, անցորդները կրավորական կեցվածք են ընդունում իրենց կողքին կատարվող ծեղկոտուքի, բարձրադասյան հայտյանքների նկատմամբ: Սա սպառնում է լինել այն միջավայրը, որտեղ ապրելու ենք մենք բոլորս ու մեր երեխաները:

Մերժելով այդպիսի հեռանկարը՝ «Ժառանգությունը» կոչ է անում.

իրավապահ մարմիններին՝ առաջիկայում բացառություններ ներկայացնել հանրությանը այս եւ մինչ այդ այլ լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունների առթիվ հարուցված քրեական գործերի ընթացքի, դրանք իրականացնողների ու կազմակերպիչների մասին, հանրության այն անդամներին, ովքեր տեղեկություններ ունեն լրագրողների նկատմամբ բռնություններ իրականացնող անձանց մասին՝ իրենց տիրապետած տեղեկատվությամբ աջակցել իրավապահ մարմիններին՝ բացառապես այն ամենի տեսուծ կանգնածներին, հասարակությանը ընդվզել ազատ խոսքի նկատմամբ իրականացվող ունեցողությունների դեմ, այլապես վաղը բոլորս գրկվելու ենք տեղեկացված լինելու մեր իրավունքից:

20 օգոստոսի 2008թ.

«Ժառանգություն» խմբակցության պատգամավորների հայտարարությունները Ազգային ժողովում

Անահիտ Բախչյան



Հարգելի գործընկերներ, Ամեն հինգշաբթի՝ 33 կառավարության նիստի օրը, կառավարության շենքի առջև մեզ դիմավորում են խաղաղ պայմաններում հայոց բանակում սպանված զինվորների որդեկրույս ծնողներ՝ իրենց հուսահատ հարցադրումներով:

Ապարդյուն է նրանց մխիթարող խոսքեր գտնելը, որն էլ մեկը թող մի պահ փորձի իրեն դնել այդպիսի ողբերգական վիճակի մեջ: Իհարկե, նման վիշտ, ինչպես ժողովուրդն է ասում, թշնամուղ իսկ չես ցանկանա, սակայն փաստ է, որ այսօր մեր քաղաքացիներին մեր մխիթարանքի խոսքերը պետք չեն, այլ պետք է օգնություն՝ նրանց ձայնը տեղ հասցնելու, նրանց մասին հոգ տանելու, նրանց հուզող հարցերի պատասխանները տալու համար: Լսելով քաղաքացիների կողմից առաջարկված հարցեր են զգալով, որ դրանց լուծումներ տալու համար հարկավոր են համակարգային մոտեցումներ՝ անհրաժեշտ համարեցի օգտագործել այս հեղինակավոր ամբիոնը են բոլորի ուշադրությունը հրավիրել որդեկրույս ծնողների կողմից բարձրացված մի շարք խիստ կարևոր հարցերի վրա:

Մեր հասարակությունում կա արդարության, հրապարակայնության, իրավունքների պաշտպանության և մարդասիրության պակաս, հետևապես՝ նաեւ վստահության բացակայություն: Եվ անհամաձայնության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ այս բացասական երեւույթն իր արմատներն է ձգել նաեւ մեր բանակում: Ինչպե՞ս վստահել են հավատալ երկրիս պաշտպանվածությանը, եթե վստահ չես, որ այնտեղ անհետ չեն կորչի մեր տղաները, այն էլ այնպես, որ երբեք պատճառը հայտնի չդառնա: Մարդասպանության գոհերի հոգիները, նրանց ծնողները իրավունք ունեն են պահանջում են արդարություն, իսկ մենք պարտավոր ենք զոհն լսել նրանց՝ ապահովելով այդ արդարությունը՝ հանուն հայկական բանակի պատվի և արժանապատվության: Արդարությունը պիտի հարցի հանուն տուժածների իրավունքների վերականգնման և արողներիս մեջ հայոց բանակի նկատմամբ հավատի ներշնչման: Մարդ պետք է իրեն ապահով զգա ամենուր եւ ամեն պարագայում, հայրենիքի սահմանները պաշտպանելիս՝ առավել են:

Նաիրի Իսախանյան  
Ժամկետային զինծառայությունն անցել է Գորիսի 60/369 զորամասում:  
Չհիվել է 2005 թվականի ապրիլի 11-ին: Մինչ օրս դատաբժշկական հետաքննության արդյունքը ծնողներին չեն տրամադրել:  
Մոր պնդմամբ՝ Նաիրիին ծեծելով սպանել են, այնուհետև գնդակահարել մահացածի դիմ:

Տիգրան Օհանջանյան  
(Մայրը՝ Գյուլվարդ Աղաջանյան)  
Ժամկետային զինծառայությունն անցել է Կարծաղբյուր գյուղի 28/418 զորամասում, զոհվել է 2007 թվականի օգոստոսի 30-ին:  
Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ հուսանքահարվել է:  
Ծնողների պնդմամբ՝ սպանվել է հրամանատարների կողմից:  
Օհանջանյանի դատն ընթանում է Գավառի առաջին ատյանի դատարանում:

Գեղամ Սերգոյան  
(Հայրը՝ Սուրեն Օհանջանյան, մայրը՝ Գոհար Սարգսյան)

Ժամկետային զինծառայությունն անցել է ԼՂՀ Ստեփանակերտի զորամասում, զոհվել է 2007 թվականի ապրիլի 15-ին:

Հոր պնդմամբ՝ Գեղամին գնակահարել է դասակի հրամանատար Գեորգի Գրիգորյանը՝ գլխարկ են գոտի չկրելու համար:

Մեղադրյալի փաստաբանը դատարանին միջնորդություն է ներկայացրել Գեղամ Սերգոյանի սպանության գործը ԼՂՀ դատարան տեղափոխելու համար:

Անդրանիկ Հայրապետյան  
(Հայրը՝ Ռոբերտ Միրզոյան)  
Ժամկետային զինծառայությունն անցել է ԼՂՀ Մարտակերտի զորամասում: Մահացել է 2008 թվականի մայիսի 15-ին:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ զոհվել է թշնամու գնդակից: Ծնողների պնդմամբ՝ Անդրանիկին սպանել են հայրենի բանակի հրամանատարները: Ջոհվածի մարմնին եղել են կապուկներ, ծնողներն ունեն լուսանկարները: Նախաքննությունը շարունակվում է, այս ընթացքում 3 քննիչ է փոխվել:

Արթուր Գրիգորյան  
(Հայրը՝ Թովմաս Հայրապետյան, մայրը՝ Անահիտ Կիրակոսյան)

Ժամկետային զինծառայությունն անցել է Գորիսի 60/369 զորամասում: Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2008 թվականի օգոստոսի 15-ին Արթուրը վայր է ընկել 2 մ բարձրությամբ անկողնուց եւ ջարդել գլուխը: Ծնողների եւ Արթուրի պնդմամբ՝ իրեն ծեծի է ենթարկել վաշտի հրամանատար Դավիթ Հայրապետյանը: Մինչ օրս դատաբժշկական հետաքննություն չի անցկացվել:

Արթուրը հետազայուն պետք է ենթարկվի պատասխանատվության:

Ներկայումս 2-րդ կարգի հաշմանդամ է, ազատվել է ժամկետային զինծառայությունից:

Արդարության վերականգնման համար զոհված են հաշմանդամ դարձած զինծառայողների ծնողների բողոքները ինքնին պահանջում են ստեղծել Աժ Ժամանակավոր համեմատողով, որը կզբաղվի իրենց որդիների սպանության հանգամանքների և մարմնական վնասվածքների հասցնելու դեպքերի բացահայտմամբ:

Եսպիտով, բարձրաձայնում են պահանջում են Ազգային ժողովից՝ հետամուտ լինել այս հարցին եւ թույլ չտալ հուսահատ անել մեր որդեկրույս քաղաքացիներին:

30 սեպտեմբերի 2008թ.

Ստյոպա Մաֆարյան



Միրելի հայրենակցներ,

Կովկասյան տարածաշրջանում եւ մասնավորապես Հարավային Օսիայում օգոստոսին տեղի ունեցած զարգացումները վկայեցին, թե որքան են փոփոխվել աշխարհն ու մեր տարածաշրջանը, եւ որքան վտանգված են փոքր պետություններն ու պետականություններն ու պետականություններն ու պետականություններն ու պետականություններն:

Կամանման միավորները գերտերությունների մեծ խաղերի հորձանուտում: Այդ զարգացումները վերստին ահագանցում են, որ այնպիսի փոքր պետությունների, ինչպիսիք են Հայաստանը կամ Լեռնային Ղարաբաղը, ազգային անվտանգության լրջագույն բարդադրություններ են առաջացնում, ճկուն, գործուն, միջազգային հանրության համար ընթերցելի ու հասկանալի արտաքին քաղաքա-

կանությունն է, որը խարսխվում է նրանց միջազգային բարձր վարկի ու ինքնիշխանությունից բխող շահերի վրա՝ իրեն ժողովրդավար, իրավական պետություններ ու քաղաքակիրթ միջազգային հանրության բաղկացուցիչ մաս: Ջորջորինակ, եթե մեր հայրենան Կրաստանը միջազգային հանրության շրջանակներում չունենար նման համարում, ապա Հարավային Օսիայում անհամաձայն ու ժգոնություններն ու դրանով մեծ սխալ գործելուց հետո չէր արժանանա միջազգային լայն աջակցության: Պետության դրական իմիջը մեծապես կարելու է այլ պետությունների քաղաքական աջակցությունը ստանալու եւ, այդպիսով, անվտանգության քաղաքականություն վարելու առումով:

Մինչդեռ մեկ տասնամյակ շարունակ Հայաստանի կառավարող շրջանակները գերնպատակ են դրել, այսպես կոչված, «ուժեղ պետություն» ստեղծելը՝ ցավոք, դրա տակ դնելով «ուժային» իմաստը, ինչպես շատ դիպուկ նկատում է «Ժառանգություն» խմբակցությունից իմ գործընկեր Լարիսա Ավաղեղյանը: Փաստացի, ժողովրդավարական, իրավական պետությունը նույնացվում է ռազմատնտիկանության հետ՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով եւ անտեսելով Հայաստանի միջազգային վարկանիշի անբույլատրելի տատանումներն ու անկումները, որոնք արդյունք են օրվա իշխանությունների անհետաձեռն քաղաքական որոշումների ու քայլերի: Այս ամիսներին այդպիսիք բազմաթիվ են եղել: Այս օրերին էլ եւսիս-ի սնդիթորինգի հանձնաժողովում քննարկվում է Հայաստանի ստանձնած կարտավորությունների կատարման ընթացքը, եւ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Դամերբերգը հրապարակեց իր գեկույցը: Հունվարին եւսիս ձեռնարկի նստաշրջանի օրակարգում կրկին քննարկվելու է Հայաստանի կողմից պարտավորությունների կատարման ընթացքը եւ որոշվելու է՝ պատժել, թե չպատժել Հայաստանին: Իսկ ինչ ենք արել մենք այս ամիսների ընթացքում. մարտի 1-ի ոճրագործությունից անցել է ուղիղ 7 ամիս, սակայն այդպես էլ պարզ չեն սպանություն իրականացրածների ինքնուրույնը, սպանությունների հանգամանքները: Պետք է 6 ամիս պահանջվեր, որպեսզի մարտի 1-2-ին տեղի ունեցած իրադարձություններն ուսումնասիրելու նպատակով ստեղծված Աժ Ժամանակավոր հանձնաժողովը հասկանա, որ չի կարող աճգամ բացահայտել իրադարձությունների ճշգրիտ ժամանակագրությունը: Քաղաքական ընդդիմախոսության համար պատասխանված են մնում մեր 3 գործընկերներն ու ՀՀ այլ քաղաքացիներ, ոստիկանների ցուցմունքներով դատապարտվել են 1 տասնյակից ավել մարդիկ եւ այսպես շարունակ: Բազմակարծ էլեկտրոնային լրատվամիջոցների ապահովման ուղղությամբ ոչ միայն քայլեր չարվեցին, այլեւ ամեն գնով կանխվեց նոր մրցույթների անցկացումը: Լրագրողների նկատմամբ ոտնձգություն իրականացրածները չպատժվեցին: Վերջին դեպքը Հանրային ռադիոյի «Ռադիոլուր» ծրագրի տնօրեն Արթուր Սահակյանի հետ ապարդված էր: Բավական է միայն, որ այս փաստերն ամրագրվեն, եւ անկախ նրանից՝ մեր պատվիրակությանը կզրկեն, թե չեն զրկի քվեարկության իրավունքից, մեր պետության համարումն ու իմիջը վտանգված են: Վերադառնալով հայտարարությանն նախաբանին, հռետորական հարցադրմամբ ավարտում եմ. ինչպե՞ս ենք ապահովելու մեր եւ ԼՂ անվտանգությունը այնպիսի աշխարհում ու տարածաշրջանում, որտեղ հարցերը ռազմական ճանապարհով լուծելու հավանականությունը մեծացել է, եւ մյուս կողմից՝ մենք աշխարհի համար չունենք այն կենսական նշանակություն ու համարում, որ աշխարհի պետությունները պաշտպանեն հնարավոր հարձակման դեպքում: Հավատաքեզ, այդ դեպքում մեր բանակն ու ռազմական ներուժը շատ քիչ են: Մտածեք այս մասին, պարունայք պաշտոնյաներ:

30 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության հարգելի քաղաքացիներ եւ բնակիչներ

Յուրաքանչյուր շաբաթ օր՝ ժամը 12-ից մինչեւ 16-ը, կուսակցության կենտրոնական գրասենյակում (հասցեն՝ Երեվան, Մուսկովյան 31, բնակարան 76ա) դուք կարող եք հանդիպել «Ժառանգություն» խմբակցության պատգամավորի հետ: Շերտագրվելու համար կարող եք զանգահարել 53-69-13, 53-26-97 հեռախոսահամարներով:

# «Ժառանգություն» խմբակցության անդամների հայտարարությունները Հանրային հեռուստաընկերության «Խորհրդարանական շաբաթ» հաղորդման շրջանակներում

## Մտայնա Սաֆարյան



«Ժառանգություն» կուսակցության անունից մեզ բոլորիս շնորհավորում են Հայաստանի Հանրապետության անկախության 17-րդ տարեդարձի կապակցությամբ: Մեր պետականությանը մաղթում ենք հարատևություն, ներկա և ապագա սերունդներին՝ այն պաշտպանելու և հզորացնելու վճռականություն, մեր ժողովրդին՝ հույս և հետևողականություն, իսկ գործող իշխանություններին՝ ժողովրդամաստ, պետականություն ամրապնդող քայլեր կատարելու քաղաքական կամք:

Միրելի ժողովուրդ, Սեպտեմբերի 8-ից մեկնարկեց Ազգային ժողովի չորրորդ նստաշրջանը: Ավարտված է Ազգային ժողովի կողմից ընդունված վերջին օրինագծերը, թե՛ Երեւանի համայնքներում սեպտեմբերին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները եւ թե՛ Ազգային ժողովի Սախազադեի պաշտոնի շուրջ տեղի ունեցող խայտառակ զարգացումները հիմք չեն տալիս մեզ կարծելու, որ օրվա իշխանությունները դասեր են քաղել փետրվարտասնինի ամառվա ընտրություններից եւ մարտնչական արյունոտ բարբարոսությունից: Երեւանում ՏԻՄ ընտրությունները փաստեցին, որ ընտրության իրավունքը տակալվի մնում է ժողովրդից խլված, իսկ կառավարող շրջանակները՝ վախենալով ընտրողի անկեղծ ձայնից ու քվեից, այն վեր են ածում գովող կարգաթիվ:

Սեպտեմբերին «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները փաստեցին, որ ներկա իշխանությունները մահու չափ վախենում են ազատ խոսքից, 7 տարուց ավելի եթերազրկված «Ա1+»-ից ու «Նոյան տապալանից»: Եվ այդ վախի պատճառով հրաժարվեցին միջազգայնորեն տարածման հերթական պարտավորության կատարումից: Հեռարձակումների քվայնացման պարտավորված նրանք մինչեւ 2010 թվականը բացառեցին նոր մրցույթների կազմակերպումն ու վերոնշյալ հեռուստաընկերությունների գրկեցին դրանց մասնակցելու հնարավորությունից:

Արժանագրեք, որ ընտրության ու քվեարկության իրավունքը գողացված է նաեւ Ազգային ժողովից: Տարիներ շարունակ վերջինս պարզապես դակել է ՀՀ կառավարության ներկայացրած բոլոր օրինագծերը: Իսկ աժմ նրան պարտավորվում է վավերացնել Ազգային ժողովի պատերից դուրս նշանակված նոր նախագահին: Փաստացի, պետության երկրորդ դեմք է փոխվում՝ Ազգային ժողովի նախկին խոսնակին հարկարդելով իր դիմումն համաձայն ազատվել, մյուսին էլ՝ նշանակելով: Եվ երբ պատճառաբանվում է, թե այդպես նշանակված Աժ նախագահը բարձրացնելու է Ազգային ժողովի արդյունավետությունն ու անկախությունը, մեղ է ասում, ընթացում է առաջանում: Իշխանությունների կողմից նման ձեռքով նշանակված այդ ո՞ր գյուղացու, թաղացու է բարձրացրել պետական մարմնի անկախությունը եւ ծառայել ժողովրդին: Ո՛չ մեկը:

Անհեթեթությունների շրջան սրանով չի փակվում: Սեպտեմբերի 11-ին ՀՀ կառավարությունն իր նիստում գաղտնագողի շրջանառության մեջ է դրել «Հինապարտության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծ, որով նախատեսվում է ԲՈՒՀ-երում վերացնել տարկետեման իրավունքը եւ բավարարված ավարտածներին զորակոչել բանակ ու դրանից հետո միայն մագիստրատուրա ընդունվելու իրավունք տալ: Եվ դա անում է մի կառավարություն, որը գիտությունն ու կրթությունը, գիտելիքի վրա հենվող տնտեսությունը հռչակում է առաջնայություն, կրթված ու բամբակ մարդը՝ երկրի զարգացման հիմնական ներուժ եւ աղ-բատության հարթահարման նախադրյալ: Սակայն այս քայլով հարված է հասցնում եւ կրթությանն ու գիտությանը, եւ մարդուն, եւ տնտեսությանը:

Այսպես պետականություն չի ամրապնդվում: Քաղաքատարկյալներով ժողովրդավարություն չի կայացվում: Պատվիրված դատավարություններով արդարություն չի հաստատվում անկախության հռչակումից ոչ 5, ոչ 17 եւ ոչ էլ 117 տարի անց: Ամուր պետա-

կանությունը խարսխված է ազատ մարդու, ազատ խոսքի, ժողովրդավարական ինստիտուտների ու ընթացակարգերի վրա: «Ժառանգությունը» կոչ է անում իշխանություններին՝ վերջապես ազատեք մարդկանց կապակցներից, հասարակությանն ու պետական հանրակարգերին՝ պարտադրանքից, գործեք հաշվետու եւ թափանցիկ, հասարակության հետ անկեղծորեն երկխոսեք երկրի խնդիրների շուրջ եւ ոչ թե գործեք ժողովրդի փկուկներով:

21 սեպտեմբերի 2008թ.

## Զարուհի Փոստանջյան



Հարգելի հայրենակիցներ, հայտարարություն վերաբերում է Ազգային ժողովի վերջին մեկ տարվա գործունեության ժառանգությանը: Այս առումով որոշ դրական միտումների կողքին ցանկանում են հատկապես անդրադառնալ մեր գործունեության բացասական հետևանքներին եւ սխալներին, քանի որ հատկապես կարեւորում են մեկնալու, իսկ ապագայում՝

սխալների մեխանիզմի դրանց բացառումը:

2007 թվականի օգոստոսի 27-ին «Ժառանգություն» խմբակցությունը Բաժնի Հովանանիսյանի հեղինակությամբ, ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման վերաբերյալ օրենքի նախագիծը՝ կանխազգուշակալով, որ եվրամիությունը եւ ԱՄՆ-ի կառավարությունը եւ Կոստանտինոպոլի քաղաքացիները կհամարեն իր զործողությունների մեջ, երբ Հայաստանը համեմատաբար ազատ էր իր գործողությունների մեջ, երբ Հայաստանը ճանաչման գործընթացը խանգարող այսօրվա հանգամանքները: Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները կանգնել են բարդությունների առջև, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ են պետական ճկուն մտածողություն, կամք եւ նոր ջանքեր:

Չորրորդ գումարման Ազգային ժողովը իր մի շարք քվեարկություններով բազմաթիվ ռոտահարեց մեր հազարավոր քաղաքացիների իրավունքները՝ խաղալով նրանց ճակատագրերի հետ: Ժողովրդի մի սովորական ձեռքով պարզեցված հարկի մասին օրենքի կիրառումից:

«Ժառանգությունը» մտահոգ է, որ նմանատիպ հետևանք կարող է ունենալ ՀՀ-ի պարտադիր ներդրման մասին օրենքի կիրառումը:

Մեւսնա լինջ ջրի բացթողման վերաբերյալ օրենքի ընդունումը՝ հակառակ համրության, հասարակական կազմակերպությունների ու «Ժառանգություն» խմբակցության բուռն բողոքների, դարձավ բոլորիս պարտությունը, քանի որ Մեւսնը ազգային հարստություն է, եւ մենք իրավունք չունենք անհեռանկար եւ ազգային շահերից չբխող օրենքներ ընդունել, որոնք սպասարկում են միայն որոշակի խմբերի շահերը:

Ծանրագույն մեղք ենք համարում արտակարգ դրության հայտարարումը, որի արդյունքում, ըստ պաշտոնական տվյալների, կան 10 գոհեր եւ շուրջ երկու հարյուր վիրավորներ, իրավապահ մարմինների կողմից հալածանքի ենթարկված հազարավոր մարդիկ: Բազում օրենքների ուղղակի խախտմամբ՝ առասպելական քանակությամբ են գտնվում 70-ից ավելի քաղաքական ակտիվիստներ եւ շուրջ տասը, իբր, քրեական հանցանք գործած երիտասարդներ:

Իսկ բարոյական հարթության վրա մեր ամենամեծ պարտությունը «Ժառանգություն» խմբակցությունը համարում է 2008 թվականի մարտի 4-ին օրենքի կրպիտ խախտմամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ Ազգային ժողով ներկայացրած միջնորդագրի արդյունքում մեր չորս գործընկերների անձեռնմխելիությունից զրկելն ու ձերբակալելը:

Հայ ժողովուրդը ունի ազատ խոսք լսելու և արտահայտելու իրավունք: Խորհրդային տարիներից ի վեր հայ հանրությունը գուրկ է եղել ազատ խոսքի իրավունքի իրացումից: Այսօր չկա տոտալիտար խորհր-

դային Միությունը, սակայն մենք ունենք լրատվական դաշտի տոտալ ճնշման իրականություն:

Խոսքերիս վրա ապացույցը «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի մեջ փոփոխության ընդունումն էր, որն իրականացվեց անմախաղեպ հապճեպությամբ, այսինքն՝ երեք ընթերցում մեկ օրում: Պայմանականորեն այն կարելի է անվանել օրենք ընդունել «Ա1+»-ի, «Նոյան տապալանի» եւ ազատ լրատվության:

28 սեպտեմբերի 2008թ.

## Լարիսա Ավազերյան



Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի հերթական քառօրյալի ընթացքում քննարկվել են մի շարք օրենքներ, որոնցից ամենամեծ ուշադրության է արժանացել կառավարության կողմից առաջարկված «ՀՀ հանրակրթության մասին» օրենքի նախագիծը: Հատկանշական է, որ որպես համազգեկցող հանդես եկավ «Ժառանգություն» կուսակցության ղեկավար եւ այդ ոլորտին բաջատողական մասնագետ Անահիտ Բախչյանը, որի հմտություններին ու գործին լայն հասարակությունը ականատես է եղել դեռեւս դպրոցի տնօրենի վաստակաշատ գործունեությունից: Նախագիծը քննարկումները տակալվին ավարտված չեն, սակայն արդեն հայտնի է, որ առաջին ընթերցումից հետո կազմակերպվելու են խորհրդարանական լուսններ: «Ժառանգություն» խմբակցությունը հորդորում է շահագրգիռ բոլոր անձանց եւ կազմակերպություններին՝ ներգրավվել այս օրինագծի քննարկման աշխատանքների մեջ:

Այս քառօրյալն նշանակորվեց նաեւ Աժ նոր նախագահի ընտրություններով: Չանձնավորելով Աժ նախագահին փոխելու գործընթացը՝ «Ժառանգություն» խմբակցությունը այդ գործընթացները գնահատում է որպես գործող համակարգի բացասական գործընկերակի շարունակություն, որով հերթական հարվածն է հասցվել հայաստանյան պաշտպանությանը: «Ժառանգություն» խմբակցության կողմից Աժ նախագահի պաշտոնում իր թեկնածուին առաջարկելը միտված էր եւս մեկ անգամ Ազգային ժողովի եւ մեր հասարակության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ նախկինում ձեւավորված պրակտիկայի շարունակության արժեքը կրկնվում են Աժ-ի՝ որպես քաղաքական բարձրագույն մարմնի, դերն ու նշանակությունը:

Քառօրյալից հետո հրավիրված արտահերթ նիստում ՀՀ գործող նախագահի ուղերձը «Ժառանգությունը» գնահատում է որպես բարի ցանկությունների հռչակում՝ առանց որեւէ իրատեսական աղբյուրի մեր երկրում տիրող քաղաքական իրողության հետ: Համաձայնվելով ուղերձում հիշեցված՝ երկրի տնտեսական զարգացմանը միտված ծրագրերի հրատարակության գաղափարների հետ, չենք կարող չընդգծել, որ առանց իշխանությունների կողմից հասարակության վստահությունը վայելելուն ուղղված որոշակի քայլերի ղեկավար է պատկերացնել ազգային-պետական ծրագրերի արդյունավետ իրականացումը: Մարտմեկյան ուղերգական իրադարձությունների կոնկրետ մեղավորների բացահայտելու անկարողությունը ցույց է տալիս, որ իշխանությունների՝ հասարակության հետ հարաբերություններում նոր էջ բացելու հայտարարությունները հեռու են իրականությունից:

Հանրապետության գործող իշխանությունները արդեն իսկ պետք է բացահայտած լինեին մարտի 1-2-ի իրական մեղավորներին, ազատ արձակելին քաղաքական այլախոհության համար ազատազրկված անձանց, կտրուկ քայլեր ձեռնարկելին հանրահայտ կաշառակերներին եւ սովետային բիզնեսի կարկառուն դեմքերի իրավական դաշտ բերելու համար, վերացնելին խոսքի ու մամուլի ազատության սահմանափակումները՝ դրանով իսկ ապահովելով ուղերձում հիշակված ծրագրային դրույթների իրատեսական դառնալու երաշխիքները:

5 հոկտեմբեր 2008թ.

# ՐԱՖՖԻ ՀՈՎԶԱՆԵՒՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԽՎ-ՈՒՄ

## ԿՄԵՆԱԿԻ ՓԱՏՆԱԹՈՒԴԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Են Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Դամարբերգը վերստին կայացել է Պալատում: Այդ մասին այսօր առաջարկվել է ԵՆԽՎ մոնիտորինգի միատարր խումբի կողմից: Մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի եզրակացությունները Պալատում կատարած հուլիսյան այցի վերաբերյալ:

Ըստ հայաստանյան պատվիրակության անդամ Րաֆֆի Հովհաննիսյանի՝ մտահոգություն է արտահայտվել այն մասին, որ Պալատում իշխանությունները բա-

նույնպես հարցի լուծման գործում: Հայաստանյան պատվիրակության մյուս անդամները, ովքեր այսօր մասնակցել էին Մոնիտորինգի հանձնաժողովի դռնփակ միստին, խորհրդակցում էին միմյանց հետևել խոստացան մեր հարցերին պատասխանել ավելի ուշ:

Կարինե Ասատրյան, A1+ Ստրասբուրգ, 30 սեպտեմբերի 2008թ.

## ԵՆ-Ն ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՔԱՂԱՔԱՆԱՐԿՅԱԼ ՈՐԱԿՈՒՄԸ

Եվրախորհուրդը ուշացած որոշում է կայացրել ակնհայտ ճշմարտության մասին. կարծում է ԵՆԽՎ հարցում, խորհրդակցում էին միմյանց հետևել խոստացան մեր հարցերին պատասխանել ավելի ուշ:



վարար հետետողակություն չեն ցուցաբերում խնդիրների լուծման ուղղությամբ և հույս է հայտնվել, որ «մոտ ապագայում Պալատում կարծանալի էական առաջադրություն ժողովրդավարության, մարդու իրավունքների, մարդու 1-ի հանգուցալուծման ոլորտում»:

Պարոն Հովհաննիսյանը չէր մասնակցել Մոնիտորինգի հանձնաժողովի վերջին մեկ-երկու միստերին՝ իր բաժնեկր, «ժողովրդավարության վերաբերյալ ամենական չափանիշների պատճառով»: Ըստ նրա, թե Դամարբերգի, թե գեկուցողների արձանագրության մեջ անձեռնարկություն է եղել «ժառանգության» Մարտի 1-ի խորհրդարանական հանձնաժողովի աշխատանքներին չմասնակցելու վերաբերյալ, և ինքն այսօրվա իր ելույթում ճշտումներ է արել:

Րաֆֆի Հովհաննիսյանը իր ելույթում հիշեցրել է, որ մարտի 1-ից անցել է 7 ամիս, բայց դեռևս բանտերում են գտնվում ընդդիմադիր գործիչներ, քաղաքացիներ, որոնք ժողովրդավարության կայուն դեպի են: Նա հիշեցրել է, որ նրանք բանտերում են գտնվում մեծամասամբ մեկ ոստիկանի ցուցմունքի հիման վրա, իսկ մեղադրանք է սկսվում է իշխանության զավթումից մինչև ոստիկանության նկատմամբ բռնություն կիրառելը:

«Ի տարբերություն այս բոլոր դատավարությունների, ողբերգության 10 գոհերի գործով ոչ մի բացահայտում, ոչ մի գործ, ոչ մի մեղադրանք չկա: Եվ սա շատ լուրջ հարց է հարուցում հանրային վստահության, ժողովրդավարության տեսակետից»,- «Ա1+»-ին ասել է Րաֆֆի Հովհաննիսյանը:

Իր ելույթում նա, գնահատելով հանդերձ համազգեկուցողների աշխատանքը, ասել է, որ «անհրաժեշտ է համազգեկուցողները հաշվետու լինեն, շահերի բախում չունենան այդ երկրում՝ ընտանեկան, ամուսնական, որովհետև կայ չունենան»: Ըստ Հովհաննիսյանի՝ ինքը կոնկրետ նկատի չի ունեցել Պալատում հարցով համազգեկուցողներին:

Ի դեպ, այսօր առաջարկվել է Մոնիտորինգի հանձնաժողովի անունից մշակել փաստաթուղթ և հաջորդ՝ ղեկավարել նախատեսվող միատարր հաստատել: Բայց չի բացառվում, որ Հանձնաժողովը վերանայի իր օրակարգը և հուշագիրը ներկայացվի ԵՆԽՎ այս նստաշրջանի ընթացքում:

Հիշեցնենք, որ Րաֆֆի Հովհաննիսյանը չի մասնակցում ԵՆԽՎ լիազուրկ միստերին, ինչպես և հայտարարել էր ամառային նստաշրջանի ընթացքում՝ «ունենալով ժողովրդավարության վերաբերյալ ամենական չափանիշները», դժգոհ լինելով կիրառվող երկակի չափանիշներից: Նա մասնակցում է հանձնաժողովների միստերին, քանի որ Պալատում պատվիրակության անդամ է, և ունի իր պարտավորությունները, օրինակ՝ Լորի Ջուրայան Մշակութային ժառանգության պահպա-

նում, որ Րաֆֆի Հովհաննիսյանը հունիսից ԵՆԽՎ կողմից Պալատում վերաբերյալ բավականին մեղմ բանաձևի ընդունումից հետո, դադարեցրել է իր մասնակցությունը ԵՆԽՎ լիազուրկ միստերին ու մոնիտորինգի այնպես ժամանակ մինչև. «Եվրոպայում կիրառողի իր արժեքները, իրավունքներն ու ուղեկցողները»:

Մոնիտորինգի հանձնաժողովում փաստաթղթի քննարկմանը նա չի մասնակցել: Նախորդ միստին պարոն Հովհաննիսյանը մասնակցել էր «սոսկ Պալատում վերաբերյալ արձանագրության մեջ ճշտում անելու համար «ժառանգության», ընդդիմության դեռակատարման հետ կապված»:

**Բոլոր դեպքերում ինչպե՞ս է Րաֆֆի Հովհաննիսյանը գնահատում Պալատում վերաբերյալ այսօր ընդունված փաստաթուղթը.**

«Այդ հայտարարությունը արժանվույն արտացոլում է Մարդու իրավունքների հանձնակատարի, ինչպես նաև Եվրախորհրդի ընդհանուր տրամադրությունը Պալատում նկատմամբ: Թեև շատերը ակնկալում են հույս էին տածում, սակայն այս ընթացքում առաջադրություն չարձանագրվեց մարդու իրավունքների հարգման, բանտարկյալների ազատ արձակման և այլ չափանիշներով: Արդեն ակնհայտ է բոլորի համար, եթե որևէ իրական իմաստալից, կոնկրետ, շոշափելի քայլ չկատարվի մարդու իրավունքների, Մարտի 1-ի ողբերգության ամբողջական հետաքննության և բացահայտման, ինչպես նաև քաղաքացիական իրավունքների ազատ արձակման կտրվածքով, սպա անբարենպաստ հունվար է սպասվում մեզ»:

**- Ըստ Ձեզ՝ ՀՀ իշխանությունները անհավաղ ազատ կարծակց՝ քաղաքական հայացքների համար ձեռքարկվածներին, ինչպես ասված է ընդունված փաստաթուղթում:**

«Հանրային ակնկալիք կա, որ մնա քայլ պետք է կատարեն: Եվ միայն այդ քայլը, թեկուզ ուշացած, կլինի գրավականը, արտագրից, որ մենք ունենք ինքնավստահ իշխանություն, որն ընդունում է անցյալի վիճակագրության հետազոտող, ընտրական կասկածելի ժառանգությունը և ուզում է իր քայլերով արդեն օրինավորություն, լեգիտիմություն և նաև իրավունքի ուժ տալ Պալատում մերքին և արտաքին քաղաքականությանը: Հույսով եմ, որ սա, թեկուզ ուշացած, տեղի կունենա, և արմնից պետք է բխեն այլ քայլեր, որոնք պետք է երաշխավորեն օրենքի իրական իշխանություն, օրենքի հավասար կիրառում բոլորի նկատմամբ. սա ոչ միայն պատգամավորներին է վերաբերում, այլև բարձրագույն պաշտպաններին, իրենց ընտանիքներին, իրենց աշխատակազմներին: Ամեն մեկն իրենից պետք է սկսի»:


**-Եթե ՀՀ իշխանությունները չհրազորեն հիշյալ պահանջը, հնարավոր է՝ ԵՆ պաշտոնյանները, որոնք այսօր խուսափում են քաղաքացիական օրակույմից, օգտագործում այդ ընդունվելիք փաստաթղթերում:**

«Կարծում եմ, որ քաղաքական բանտարկյալի սահմանում պարունակող դրույթներն այդ դեպքում արդեն կիրառության մեջ կըրվեն: Խիստ հավանական է, որ այն մարդիկ, ովքեր խուսափում են այսօր դրա օգտագործումից, կիրառեն»:

**-Ի՞նչ ակնկալիքներ ունեք Մարտի 1-ի ողբերգության հետաքննության համար անկախ փորձագիտական խմբի ստեղծումից:**

«Դա դեռ գործի պետք է վերածվի: Եթե Մարտի 1-ի դեպքերից 7 ամիս անց որևէ քրեական գործ չի հարուցվել մեր համաքաղաքացիների սպանության առիթով, դա փաստում է, որ մենք ունենք լուրջ իրավապահական դեֆիցիտ, ոչ լիարժեք, ոչ առարկայական մոտեցում, ուստի այս փաստաթուղթը առաքելություն է կազմավորվելուց բացի պետք է լիազորված լինի կատարել ամբողջական հետաքննումը, բոլոր տեսակի վկաների, ներառյալ Պալատում բոլոր նախագահների անխտիր հրավիրում, բոլոր նրանց, ովքեր ի պաշտոնե հրահանգներ են տվել: Կարծում եմ՝ պետք է ամբարձրվի, որ այդ հանձնաժողովը կարող է օրենքի ուժով հրավիրել վկաների, որոնք երդման մեղքը պետք է տան իրենց վկայությունը: Ապա այն պետք է ներկայացնի իր եզրակացությունը ոչ միայն իրեն մոտուղ տվող պետական օրակին՝ դա լինի նախագահ կամ ԱԺ, այլ ողջ հասարակությանը, և դրանից պետք է շոշափելի գործողություններ բխեն»:

Ջրուցեց Կարինե Ասատրյանը, A1+ Ստրասբուրգ, 2 հոկտեմբերի 2008



## ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԻՆ ԿԱՍԿԱԾՈՒՄ ԵՆ

ԵՆԽՎ-ում Ալբանիայի պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Բիբերաջը պատրաստել է մի նախագիծ, որով առաջարկվում է, որ Մոնիտորինգի հանձնաժողովի գեկուցողները «բնականոն հերթափոխի ենթարկվեն»:

Այդ մասին «Ա1+»-ին հայտնեց հայաստանյան պատվիրակության անդամ Րաֆֆի Հովհաննիսյանը, որը պաշտպանում է այդ նախագիծը: Այն արդեն շրջանառվում է ԵՆԽՎ-ում: Ըստ Րաֆֆի Հովհաննիսյանի՝ այդպիսի բանաձևի անհրաժեշտությունն արդեն ակնհայտ է, քանի որ ԵՆԽՎ ամբողջից բազմաթիվ պատգամավորներ մտահոգություն են հնչեցնում այս կառույցի կողմից երկակի չափանիշների կիրառման մասին: Այս նստաշրջանում, ԵՆԽՎ Կանոնակարգի և ամենմիջնորդության հարցերի հանձնաժողովի միստի ժամանակ Րաֆֆի Հովհաննիսյանը եւս առաջարկել է, որ առավել խստորեն հսկվի գեկուցողների հնարավոր շահերի բախումը՝ հատկապես Մոնիտորինգի հանձնաժողովում: Ըստ նրա՝ գեկուցողները, որևէ երկրի մոնիտորինգ անցկացնելուց առաջ, պետք է նախօրոք փաստեն, որ «Չկա ոչ միայն ֆինանսական շահի, այլև ընտանեկան, ազգային շահի բախում»:

A1+ Ստրասբուրգ, 3 հոկտեմբերի 2008

# Մ Ս Գ Ա Չ Գ Ա Յ Ի Ն

## «Ճառանգություն» խմբակցությունը հանդիպեց Մեծ Բրիտանիայի խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների հետ

Ազգային ժողովի «Ճառանգություն» խմբակցության պատգամավորները հանդիպեցին Մեծ Բրիտանիայի Ձուր Սմիթի հուշահիմնադրամի տնօրեն, պրոֆեսոր Բրայնը Բրիվվաթին և այդ հիմնադրամում Պահպանողական կուսակցության ներկայացուցիչ, խորհրդարանական համաձայն խմբակցության ղեկավար և Թորիի բարեփոխիչ խմբի փոխնախագահ Դամիան Գրինը: «Ճառանգություն» հետ Բրիտանացի ընդդիմադիրների զույցի թեման խորհրդարանական ընդդիմության ղեկավարության շուրջ էր: «Խորհրդարանական ընդդիմության հետ մեր հանդիպման հիմնական նպատակը ընդդիմության և նրա դերի մասին տեսակետներ փոխանակելն է»,- իրենց առաջնությունը բացատրեց Բրիտանացի խորհրդարանական Դամիան Գրինը:

Խմբակցության ղեկավար Արմեն Մարտիրոսյանն իր հերթին կարեւորեց հանդիպումը՝ հույս հայտնելով, որ «փոխանակված գաղափարները կնպաստեն Հայաստանում բազմակարծության, ժողովրդավարության այլ բաղադրատարրերի ներդրմանը», և հակիրճ ներկայացրեց ԱՄ-ում միակ ընդդիմադիր խմբակցությունն ու նրա անդամներին:

Խմբակցության քարտուղար Ստյոպա Սաֆարյանը խոսեց Հայոց խորհրդարանում ընդդիմության իրավունքների և այն դժվարությունների մասին, որոնց բախվում են: Ընդգծվեց, որ օրվա հրամայական են դարձել ոչ միայն «ԱՄ կանոնակարգ» ՀՀ օրենքում լուրջ փոփոխությունները, այլև «Ընդդիմության մասին» օրենքի ընդունումը, ինչն էապես կբարձրացնի կառավարման գործընթացում ընդդիմության կշիռը: Սաֆարյանը նաև տեղեկացրեց, որ այս պահին արդեն վերջնական տեսքի է բերվում իր կողմից մշակվող «Խորհրդարանական ընդդիմության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, և այս առումով նա կողոզուներ Բրիտանական ու եվրոպական օրինակելի փորձի փոխանակումը՝ նախքան օրենսդրական իր նախաձեռնությունը շրջանառության մեջ դնելը:

Կլունիետն խոսելով «ԱՄ կանոնակարգ» օրենքում խորհրդարանական կալիցիայի ներկայացուցիչների վերջերս կատարված փոփոխությունների մասին, որոնցով գալիք գումարման ԱՄ-ում որոշ իրավունքներ են վերապահվում խորհրդարանական ընդդիմությանը, Սաֆարյանը փաստեց, որ դրանք «կունստիտի» բնույթի են, միտևով են հայաստանյան և միջազգային հանրության աչքերին «թղթի տուր»:  
«Ընդդիմությանը վերապահված այդ նվազագույն ղեկավարությունից արդեն իսկ ակնհայտ է, թե ինչքան և ինչ իրավունքներ կարող է ընդդիմությանը զիջել գործող իշխանությունը: Ավելի ստույգ՝ գործող իշխանությունը պատրաստ չէ ընդդիմության հետ կիսել պատասխանատվությունը և այս հարցում գնալ երկրի, ժողովրդավարության շահերից բխող լուծումների»,- ընդգծեց պատգամավորը:

Հյուրերը ներկայացրին կառավարության հետ հարցուպատասխանի, վերահսկողական նշանակության մշտական հանձնաժողովները նախագահելու, կառավարությանը քննադատելու, քննարկվող հարցերի օրակարգ ձևակերպելու, հետազոտական ու նյութական միջոցների լայն հասանելիությունն ապահովելու և այլ հարցերում Մեծ Բրիտանիայի խորհրդարանական ընդդիմությանը վերապահված իրավունքները: Պատգամավորներ Անահիտ Բախչյանի և Լարիսա Ավարդյանի խնդրանքով հյուրերը տեղեկացրին նաև Մեծ Բրիտանիայում խորհրդարանի կազմի, կառուցվածքի և գործառնությունների մասին: Իսկ «Ճառանգություն» կուսակցության վարչության քարտուղար Վարդան Խաչատրյանը կարեւորեց ժողովրդավարական վարչախմբերի առկայությունը՝ որպես ընդդիմության լիարժեք ղեկավարության նախապայման: Նա հյուրերի ներկայացրած իրականությունը հնարավոր համարեց միայն օրինական ձե-

ւակորված իշխանությունների պարագայում:  
Կողմերն երկուստեք պատրաստակամություն հայտնեցին փորձի փոխանակման և համագործակցության շարունակման համար:

16 սեպտեմբերի 2008թ.

## Զավախցում ստեղծված իրավիճակի կապակցությամբ «Ճառանգություն» խմբակցությունը նամակներ է հղել օրենսդիր մարմնի պաշտոնատար անձանց



«Ճառանգություն» խմբակցությունը նամակներով դիմել է Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանին, Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության ղեկավար Կարեն Կարապետյանին, «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին, ՀՀԳ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանին, «Օրինաց Երկիր» խմբակցության ղեկավար Շեղին Բիշարյանին և Աժ պատգամավորներ Հայկ Սանոսյանին, Վարդան Այվազյանին, Շիրակ Թորոսյանին ու Տաճատ Վարդապետյանին:

Ուղարկված նամակներում նշվում է, որ «Ճառանգություն» կուսակցության Աժ պատգամավորական խմբակցությունը ՀՀ քաղաքացիներից բազմաթիվ ահազանգեր է ստացել այն մասին, որ Զավախցում տեղի են ունեցել Կրաստանի Հանրապետության իշխանությունների կողմից իրականացված հայազգի գործիչների ձեռքարկություններ, գրասենյակների և ռադիոկայանի կալանում: Զավախստանության հետ անընդհատ կապի մեջ գտնվող մի շարք քաղաքացիներից ստացվել են նաև տվյալներ, որ հայաբնակ տարածքներում արդեն շրջում են լուրեր նշված բռնարարների հետեւանքով գողվածների մասին: Իսկ այդպիսի տեղեկատվությունը ոչ հաստատել, ոչ միտել առայժմ չի հաջողվում: Նամակում փաստվում է, որ «տարածաշրջանում իրավիճակի յուրաքանչյուր լարում հղի է հայ և վրաց ժողովուրդների բարեկամության խթանման հեռանկարով, ինչը երկու ժողովուրդների համար կարող է բացասական անդրադարձ ունենալ բազում հասարակական-քաղաքական հարթություններում»:

- ա) Աժ խմբակցությունը անհապաղ կապ հաստատել վրաց խորհրդարանի հետ՝ ստանալու համար հավաստի տեղեկատվություն իրադրությունների մասին,
- բ) կազմակերպել երկկողմ հանդիպում վրաց խորհրդարանական խմբի հետ՝ բազմակողմանիորեն քննարկելու ստեղծված իրավիճակը,
- գ) ճշտել շրջաբերվող լուրերը և հավասարակշիռ հայտարարությամբ ու փոխադարձ պայմանավորվածությունների ճանապարհով կայունացնել լարված իրավիճակը տարածաշրջանում:

«Ճառանգություն» խմբակցությունը հանրապետության բարձրագույն իշխանություններից ակնկալում է գործնական քայլեր են գործընկերների արագ արձագանքը:

2 օգոստոսի 2008թ.

## «Ճառանգության» ներկայացուցիչը ՄՕՏՀ կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի մշակույթի, սոցիալական և առողջապահական հարցերի հանձնաժողովի նիստում

Ալեքսանդրուպոլիս: Հունաստանի Ալեքսանդրուպոլիս քաղաքում տեղի ունեցավ Սեծովյան տնտեսական համագործակցության (ՄՕՏՀ) կազմակերպության մշակույթի, սոցիալական և առողջապահական հարցերի հանձնաժողովի 32-րդ նիստը, որին 2007թ.-ից անդամացրել է նաև «Ճառանգություն» խմբակցության քարտուղար Ստյոպա Սաֆարյանը:

Հանձնաժողովի աշխատանքի նիստում քննարկվեց «Վլոբլապցման ազդեցությունը ՄՕՏՀ անդամ պետությունների սոցիալական քաղաքականության վրա» գեկույցը՝ նույնիսկ Մոլդովայի մայրաքաղաք Քիշինևում կայանալիք գլխավոր վեհաժողովի հավանությանն արժանացնելու նպատակով: Մտքերի փոխանակության ժամանակ ելույթ ունեցավ նաև ՄՕՏՀ-ում հայկական պատվիրակության անդամ Ստյոպա Սաֆարյանը և ներկայացրեց Հայաստանի սոցիալական իրավիճակի վրա զլոբալացման դրական և բացառական ազդեցությունները: Բանախոսն առավել կարեւորեց միգրացիայի դիտարկումը, քանի որ զլոբալացման հետեւանքով ազատ տեղաշարժի հնարավորությունները մեծացրել են աշխատուժի արտագաղթը:



«Հայաստանի Հանրապետության հարյուր հազարավոր քաղաքացիներ այսօր էլ աշխատում են ՄՕՏՀ անդամ պետություններում՝ հատկապես Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Թուրքիայում: Կրանցից ոմանք օրինական, մյուսներն անօրինական կիսուղեւորներով, սակ էլ թե՛ անպաշտպան վիճակում են գտնվում այդ երկրներում: ՄՕՏՀ-ն այն հարթակն է, որտեղ պետք է բարձրացվեն այս խնդիրներն ու լուծում

ստանան: Մեր երկրներից շատերը աշխատուժի դոմոր, մյուսները՝ հասցեատեր են: Դժբախտաբար, օրինակ, հասցեատեր երկրներից մեկի՝ Թուրքիայի հետ Հայաստանն անցած դիվանագիտական հարաբերություններ չունի և ընդհուպ աշխատանքային միգրանտների ճշգրիտ հաշվառումից հնարավոր չէ խոսել: Այդ իրավիճակում սեփական քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին խոսելն ավելորդ է»,- առավել սուր խնդրներից մեկն այսպես ներկայացրեց Սաֆարյանը: Ըստ նրա, մեր ձեռքերում է գլոբալացման բացասական հետեւանքները չեզոքացնելու կամ նվազեցնելու հնարավորությունը, և դա չանելով՝ արդարացված չէ սոսկ զլոբալացման քննադատի դերում հանդես գալը, քանի որ այն նաև մեծ ու դրական հնարավորություններ է ընձեռում:

Աշխատանքային միգրացիայի խնդրը կարեւորվեց նաև ուկրաինական պատվիրակության կողմից, քանի որ ավելի քան յոթ միլիոն ուկրաինացիներ աշխատում են ապրում են երկրից դուրս: Հանձնաժողովը որոշեց հետաձգել խնդրի կարգավորմանն ու լուծմանն ուղղված նրանց առաջարկությունը, քանի որ ԵՄ անդամ պետությունների պատվիրակությունները ցանկություն հայտնեցին իրենց հերթին ուսումնասիրել խնդիրը: Սաֆարյանը և այլ բանախոսներ շեշտեցին նաև զլոբալացման գոր-

ծրնացներում ազգային ու քաղաքակրթական ինքնությունները պահպանելու ու զարգացնելու հանգամանքը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 2009թ. գարնանը՝ Թբիլիսիում: Հերթական գեկույցման թեմա ընտրվեց միգրացիան, և այդ թեմայով գեկույցը ՌԿ պետական դումայի պատգամավոր Պոլիսկովը, խոստացավ հանգամանորեն ուսումնասիրել բարձրացված հարցերը: Մինչ այդ՝ նույնիսկ Քիշինևում տեղի կունենա գլխավոր վեհաժողովը, որտեղ Ռուսաստանը Մոլդովայից կստանձնի նախագահությունը:

25 սեպտեմբերի 2008թ.



## «Ճառանգության» հեղինակած նախագծերը շրջանառության մեջ են

Ազգային ժողովի «Ճառանգություն» խորհրդարանական խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը օգոստոսի 19-ին, իսկ քարտուղար Ստյոպա Սաֆարյանը օգոստոսի 21-ին շրջանառության մեջ են դրել Ազգային ժողովի որոշումների ութ նախագծեր, որոնք վերաբերում են Ազգային ժողովի 2008թ. մարտի 4-ի որոշումներով անձեռնմխելիությունից զրկված Աժ 4 պատգամավորներին՝ Զակար Վարդանյանի Զակարյանին, Սատուն Մեխակի Սիբայեյանին, Մյասնիկ ժողայի Մալխասյանին և հաջատուր Աբեղյանի Սուքրյանին: 2008թ. մարտի 4-ին Ազգային ժողովն իր համապատասխանաբար Ն-057-4, Ն-058-4, Ն-059-4, Ն-060-4 որոշումներով համաձայնություն էր տվել վերոնշյալ պատգամավորներին որպես մեղադրյալ ներգաղթյալ և նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու թույլտվություն ստանալու համար Զայաստանի Զանրապետության գլխավոր դատախազի միջնորդությունը:


Աժ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի հեղինակած չորս նախագծերով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Ազգային ժողովի վերոնշյալ որոշումները: «Ճառանգություն» խմբակցության քարտուղար

Ստյոպա Սաֆարյանի կողմից շրջանառության մեջ դրված մյուս 4 նախագծերով առաջարկվում է փոփոխություններ կատարել դրանցում՝ որոշման վերնագրից են բոլանդակությունից հանելով «կալանքը որպես խափանման միջոց կիրառելու» բառերը: «Ճառանգություն» խմբակցության պատգամավորները համակարծիք են նրանում, որ գործընկերների նկատմամբ ընտրված խափանման միջոցներն առնվազն ենթակա են փոփոխման:

Սրան գլուգահեռ «Ճառանգություն» խմբակցության պատգամավորները ստորագրել են Զակար Վարդանյանի Զակարյանի, Սատուն Մեխակի Սիբայեյանի, Մյասնիկ ժողայի Մալխասյանի խափանման միջոցը փոխելու վերաբերյալ ԶԶ գլխավոր դատախազին ուղղված հերթափակ երաշխավորությունը: Որպեսզի Ազգային ժողովի մյուս պատգամավորները նույնպես ստորագրեն երաշխավորությունը, այն փոխանցվել է խորհրդարանական բոլոր խմբակցություններին, ինչպես նաև դրա մասին տեղեկացվել են մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները: Նրանք դեռ չեն արձագանքել երաշխավորությանն իրենց միանալու առաջարկին:

21 օգոստոսի 2008թ.

## «Ճառանգությունը» անթույլատրելի է համարում ՍԵՎԱՆԱ լճից հավելյալ ջրառը



Օգոստոսի 21-ին ժողովը երկրորդ ընթացքում քննարկեց «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերի հաստատելու մասին» Զայաստանի Զանրապետության օրենքով փոփոխություններ կատարելու մասին Կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը: Դեռևս 2008թ. հունիսի 10-ին վերոհիշյալ օրենքում կատարված լրացումներով ու փոփոխություններով 2008թ. համար Սեւանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակ էր սահմանվել 240 միլիոն խորանարդ մետրը (մախկին 170 միլիոն խորանարդ մետրի փոխարեն): Իսկ օգոստոսի 21-ին ընդունված փոփոխություններով այն դարձվեց 360 միլիոն խորանարդ մետր: Ազգային ժողովի օգոստոսի 19-21-ի արտահերթ նստաշրջանում ծավալված բուռն քննարկումները, որոնց ընթացքում երկնագծին միակ «դեմ» արտահայտվողները են քվեարկողները «Ճառանգություն» խմբակցության պատգամավորները էին, ի ցույց դրեցին, որ հիմնավոր չեն Կառավարության կողմից բերված ներքոնշյալ պատճառաբանությունները:

Նախորդած տարիներին Սեւանա լճից ջրառը կրկնակի գերազանցող այս չափաքանակը պայմանավորված է համարապետությունում և, մասնավորապես, Արարատյան դաշտավայրում ոռոգման ջրի ստեղծված պակասորդով: Կառավարությունն ու նրան սատարող քաղաքական ուժերը այդպես էլ չկարողացան հակափաստարկել, որ Զանրապետությունում ոռոգվող հողատարածքները Կառավարությանը են կամ գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածք են պակասում է, ինչը բերել է ոռոգման ջրի կրկնակի չափով պահանջարկի: Ավելին պարզվեց, որ ոռոգման ջրի կորուստները սահունկեցուցիչ չափերի են հասնում (տարբեր ինչպիսիքներով 70-80 տոկոս) և կառավարությունը ոչինչ չի արել մասնառջող դա վերացնելու և եղած ոռոգման ջրուր արդյունքում օգտագործելու ուղղությամբ: Իսկ 2007-2008թթ. ընթացքում Ազգային ժողովը երկու անգամ մարտի է ջրօգտագործող ընկերությունները ունեցած պարտքերը՝ դրանով իսկ խրախուսելով դրուսում ամենաթողությունը:

Տեղումների երկարատև անբավարարության կամ իսպառ բացակայության, օրի ջրեմստիկների և ցածր հարաբերական խոնավության պայմաններում ապրիլ ամսից սկսած հանրապետությունում անակ են երաշխիք բնորոշ բոլոր երեւոյթները: Քննարկումները են համապատասխան ցուցանիշների առումով Մարտի տարիների պաշտոնական վիճակագրության վկայագրումները ի ցույց դրեցին, որ նշվածների կապակցությամբ տարբերությունները մեծ չեն, տարին երաշխային չէ և բերքի պակասության չլա, ինչը չի կարող էապես ավելացնել ոռոգման ջրի պահանջարկը:

Ամենախաղաղ պատկեր է ռազմավարական և դրտացիոն նշանակություն ունեցող Ապարանի և Ազատի ջրամբարներում, որոնք լցված են կիսով չափ և 2/3-ով: Անկախ մասնագետների դիտարկումները, որոնք փոխանցվել էին «Ճառանգություն» խմբակցությանը, պարզ դարձրին, որ կառավարությունը փոքր-ինչ չափազանցեցնում է իրավիճակը այդ ջրամբարների լցված լինելու առումով: Ավելին՝ պարզ դարձավ, որ տարիներ շարունակ կառավարությունը ոչինչ չի արել այդ ջրամբարների վերանորոգման և ջրի հսկայական կորուստները կանխելու ուղղությամբ:

Նման իրավիճակում «Ճառանգություն» արձանագրում է, որ ոռոգման

ջրի պակասության անվան տակ Սեւանա լճից ջրառը այլ, հանրությանն անհայտ շահերի բավարարմանն է ուղղված:

Սեւանա լճի մակարդակի բնականոն բարձրացումը սպառնում է ավանները հատվածում ներդրումներ կատարած, իմնականում ապօրինի կառույցների սեփականատեր տնտեսավարողներին,

Սեւանա լճից բաց թողնվող ջրի չափաքանակը սահմանափակ հոսանք է արտադրելու հիդրոէլեկտրակայաններում և նոր միայն ուղղվել ոռոգմանը, ինչը մասնավոր սեկտորի համար ենթադրվում է գերշահույթներ արտադրված և վաճառված էլեկտրաէներգիայից,

Չավելյալ էլեկտրաէներգիայի արտադրությունը ենթադրվում է նաև հարկային մուտքեր բյուջեում, ինչը զանկացած երկրամակում գնով ապահովելը դարձել է կառավարության գերմիտալային:

Սեւանա լճից բացթողնվող ջրի չափաքանակով կոռոզվեց հազարավոր հեկտարներ ունեցող տեղական «Ֆեռոպլանտ» ֆաբրիկաները, միջուցե նաև՝ որոշ գյուղացիների հողակտորները:

«Ճառանգություն» անթույլատրելի է համարում Սեւանա լճի էկոհամակարգը վտանգող նման քաղաքականությունը և որ տարաբնույթ ջրի փափարկումը ոչ միայն մեր, այլև տարածաշրջանի համար ռազմավարական նշանակություն, կայուն մարդկային զարգացման համար կենսական նշանակություն ունեցող և մեր ազգային հարստությունը համընդհանուր Սեւանա լճի քաղցրահամ ջրի հաշվին:

«Ճառանգությունը» հայտարարում է, որ տակավին անպատասխան են մնացել այն հարցադրումները, որոնք այս քայլի հետ կապված հուզում են հասարակությունը և մասնագետներին:

Ո՞վ է պատասխանատվություն կրելու Արարատյան դաշտավայրի հողերի աղակաման և ճահճացման համար, ինչին կհանգեցնի անմատչառելի մեծ չափաքանակով և ոռոգման նպատակով չէ պիտանի Սեւանա լճի ջրուրը այնտեղ ուղղելը,

Ո՞վ է պատասխանատվություն կրելու Սեւանա լճի հատակի մեկուսացումը շերտի՝ հիպոխոնոնի շերտակազմման համար, որը թույլ կտա վերականգնել լճի ինքնամաքման ընդունակությունը,

Ո՞վ է պատասխանատվություն կրելու Սեւանա լճի ճահճացման, այն չնայած, այդ նպատակով կառավարության հատկացումները վատնելու և նմխելու համար,

Ո՞վ է պատասխանատվություն կրելու այն մեծ կորուստների համար, որոնք առկա են ոռոգման համակարգում և որոնք անխուսափելի են նաև ջրառի այս նոր չափաքանակի պարագայում:

Ո՞վ է պատասխանատվություն կրելու մինչ այժմ չարված աշխատանքների և խոցելի ոռոգման համակարգ ունենալու համար, որի պատճառով միակ «այլընտրանքը» Սեւանա լճի ջրուրն է մնացել:

«Ճառանգություն» կուսակցությունը հայտարարում է, որ այս ամենի պատասխանատուն Կառավարությունը և օրինագծին կողմ քվեարկած քաղաքական ուժերն են, «Ճառանգություն» կուսակցությունը պահանջում է կառավարությունից շուտապես իրապարկել Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը:

21 օգոստոսի 2008թ.

## Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվեցին «Ճառանգություն» խմբակցության օրինագծերը

Այսօր Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, ի թիվ այլ օրինագծերի, քննարկման առարկա դարձան նաև «Ճառանգություն» խմբակցության պատգամավորների հեղինակածները:

1. Հիշյալ հանձնաժողովում նախ քննարկվեց Աժ պատգամավոր Զոհիանյանի Սարգսյանի «Ճառանգություն» խմբակցության պատգամավորներ Արմեն Մարտիրոսյանի և Լարիսա Ավետիսյանի համահեղինակությամբ 2007թ. նոյեմբերի 27-ին շրջանառության մեջ դրված «Զայաստանի Զանրապետության ընտրված օրենսգրքում փոփոխություններ են լրացումներ կատարելու մասին» ԶԶ օրենքի նախագիծը: Այն հեղինակների առաջարկությամբ և հանձնաժողովի որոշմամբ հետաձգվեց մինչև 30 օրով: Պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը առաջարկեց մինչև 30 օրով հետաձգել նաև նույն օրենքում փոփոխություններ են լրացումներ կատարելու մասին իր կողմից 2008թ. հունիսի 23-ին շրջանառության մեջ դրված օրինագիծը:

2. Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը որոշում ընդունեց դրական եզրակացություն տալ Զարուհի Փոստանյանի կողմից 2007թ. նոյեմբերի 7-ին շրջանառության մեջ դրված «Զայաստանի Զանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զայաստանի Զանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագծերի փաթեթին և այն ընդգրկել Աժ քառօրյա նիստերի օրակարգում: Աժ կարոնակարգ օրենքի 65-րդ հոդվածի համաձայն այն այլընտրանքային օրենքի նախագծի կարգավիճակով կքննարկվի Ազգային ժողովի սեպտեմբերի 8-11-ի քառօրյայում՝ ԶԶ Կառավարության ներկայացրած նույնատիպ փաթեթի հետ միասին: Զարուհի Փոստանյանի հեղինակած օրինագիծը վերաբերում է պայմանական վաղաժամկետ ազատման խնդրին և առաջարկում է վերաքննել այդ խնդրի ստեղծված «անլիսի հանձնաժողով»: Օրինագծի ներկայացման ժամանակ Զարուհի Փոստանյանը նշեց, որ ինչպիսի հանձնաժո-

ղովը գործնականում կոռուպցիայի ենթարկված մարմին է, հազարավոր բանտարկյալներ ու քրեակատարողական հիմնարկի բազում ներկայացուցիչներ դժգոհ են դրա գործունեությունից և կողմ են վերցնում:

3. Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում պատգամավոր Ստյոպա Սաֆարյանը հանգամանորեն ներկայացրեց իր կողմից 2008թ. հունիսի 19-ին շրջանառության մեջ դրած «Ճողովներ, հանրահավաքներ, երթեր են ցույցեր անցկացնելու մասին» Զայաստանի Զանրապետության օրենքում փոփոխություններ են լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: Դրանով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել հայաստանյան միջազգային հանրության համար անընդունելի ճանաչված ինչպիսի օրենքի 2008թ. մարտի 17-ի փոփոխությունները, ինչպես նաև՝ հունիսի 11-ի մասնակի լրբարգումները: Օրինագծի հեղինակը նշեց, որ հունիսի 11-ի փոփոխությունները չեն վերացրել մարտի 17-ի փոփոխությունների վերաբերյալ եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի և ԵԱԿ/ԺՅԱԳ-ի համատեղ եզրակացության մեջ ամրագրված մտահոգությունները: Սաֆարյանը տեղեկացրեց, որ դրանք գործնականում արդեն բազում խնդիրներ են առաջադրել: Մասնավորապես ԶԶ Ոստիկանությունը և Ազգային անվտանգության ծառայությունը բազմաթիվ երկայնացրել են ոչ հավաստի, անհիմն եզրակացություններ, որոնք էլ ինքն են դարձել երեսնամյա քաղաքացիականի համար մեծելու զանգվածային իրապարկային միջոցառումներ անցկացնելու ընդհանրության՝ մեկ տասնյակից ավելի հայտերը: Բացի այդ օրենքի ներկայիս տեսքը կարող է չի Ահաճապարության ոգուն, քանի որ չի նպաստում պետության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ապահովելու պետության պարտիվ պարտավորության իրականացմանը: Նա հիշեցրեց, որ նման օրինագծերի քննարկման և ընդունման ժամանակ էական է Վենետիկի հանձնաժողովի կարծիքը և առաջարկեց 30-օրով հետաձգել օրինագծի քննարկումը՝ մինչև երբ ստացվելու:

5 սեպտեմբերի 2008թ.